

Օտար, որոնց. — իրեն և իր մտայնությամբ հետեւողներուն, որոնք՝ յուսանք թէ բազմալեզու չլլան, վասնզի յաւերժական նախաինք մը պիտի մնայ այս կոթողային արձանագրութիւնը:

Այդ մեծարժէք գործերը կը պատկանին ամբողջ մարդկութեան, ու պիտի մնան միշտ անմահ, հակառակ իր խեղաթիւրումներուն և յանդգնարանութիւններուն: Չենք ուզեր կրկնել ըստածները. կը վերջացնենք չէշտելով որ Օշական գրական բացասութիւն մը ի յայտ կը բերէ այս իր ծիծաղելի մաքրագործութեան ձեռնարկին մէջ: Ab uno disce omnes.

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

Նոյնիսկ ծագողներուն մէջ, որպէսզի աշակերտութիւնը ծանօթանայ այդ դէմքերուն: Այսօր գրական ճաշակը փոխուած է անտարակոյս, այսօր գրական զարգացումը գոյութիւն չունի, բայց գրականները կը մնան անխախտ գրականութեան պատմութեան մէջ: Միեւնոյն ելոյթը պէտք ենք ունենալ մենք նկատմամբ մեր անցեալ արժէքները գրագէտներուն, ըլլան անոնք գրական, ուսմանը և կամ ուրիշ մտայնութեան ու զարգացման հետեւող, զատելով իւրաքանչիւրը իր կատարած անցողակի և կամ մնայուն արժէքին մէջ:

Ուստի Միւրթարեան գրականութիւնը, իր մեծ ու փոքր դէմքերով, վարկաբեկելու իր եղանակը, յայտարար նշան է իր զատնուած պատկանին: Շրջան մ'էր այդ որ անցած է, թողլով սակայն մնայուն արդիւնք, օգտակար կերպով նկատողութեան առնուելիք: Միւրթարեան կաճառին ուրիշ կարեւոր դէմքերու մասին, ինչպէս զԷլիսաւորապէս Աւերջանի, «Բազմալեզու» ասիւթ պիտի ունենայ անդրադառնալու, երբ մանաւանդ լոյս տեսնէ Համապատկերի Բ. հատորը: Նմանապէս ուրիշ ասիւթ մը կը վերապահենք ընդհանուր տեսութիւնը Օշականի բերած յեղաշրջումին արեւմտահայ գրականութեան զանազան մեծ ու փոքր զարգացողներու մասին, որոնց գրականութեան մէջ եւս ան իր եզակի ու միանգամայն արտաոսող տեսակետները ունի:

Ս. ԵՓՐԵՄ ԵՒ ԻՐ ՃԱՌԸ

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒՆ¹

(Շար. տես Բազմ. 1948, թիւ 5-6, էջ 101)

Ասորի եկեղեցւոյն ու գրականութեան երկու լուսաւորներ եղած են, Յակոբ Ափրաատ՝ Չգոն պարսիկ կոչուածը ու Ս. Եփրեմ, — առաջինը՝ արեւելեան կամ պարսիկ պետութեան ներքեւ եղող Ասորիներուն, երկրորդը՝ արեւմտեան կամ յոյն կայսրութեան տակ գտնուող ասորիներուն, — երկուքն ալ հեթանոս ծնողաց զաւակներ, երկուքն ալ 16-18 տարեկան հասակին քրիստոնեայ դարձած: Ափրաատ, — քիչ մ'աւելի տարեց քան Ս. Եփրեմ, հաւանորէն ծնած Քրիստոսի 285-290 թուականին, — առաջին եկեղեցական գրիչն եղած է պարսիկ ասորիներուն, որ զերէր է իր 23 ճառերը (ասորի տառերուն թուով), որոնք վերապահով Ս. Յակոբ Մծբնացւոյն ընծայուել են, մանաւանդ մեր գրական պատմութեան ու ձեռագիրներուն մէջ, ծանօթ չըլլալով մերիներուն Յակոբ Ափրաատը բայց միայն Փաւստոս Բիւզանդի Պատմութեան հեղինակին, որուն գրութեան մէջ նոյնպէս շփոթուել է Ս. Յակոբ Մծբնացւոյն հետ՝ սխալ ընթերցումով մը. ահաւասիկ Բիւզանդին խօսքը (էջ 22. Ա. (Գ) գիրք. Ժ գլուխ), «Չայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն (Մծբնացւոյ), այլ սքանչելի... որում անունն Յակոբ, փոխանակ ազգաւ պարսիկ կոչէր»... Այս վերջին տողին մէջ է վերապահը, որ եթէ ուղղուի՝ մէկ տառի միայն յաւելումով, այն է՝ ազգաւ բառին առաջին ա տառը միացնելով փո-

(1) Հ. Յ. Թորոսեանի այս յօդուածը որ հոս կը վերջանայ, կը պարունակէ ընդհատուած էջեր. բայց մենք առանց ո՛ր է հղումի հրատարակութեան տուիւնք այնպէս ինչպէս թողած է ան:

խանակին ու վրան ւ զիրը աւելցնելով՝ առաջ կու գայ. «որում անունն Յակոբ» (որ) փոխանակաւ (այն է՝ այլազգ՝ այլապէս) Չգոն (Չգոն) պարսիկ կոչէր»: Սա զրաւ է իր յիշեալ ճառերը իբր 337-345 թուականներուն, ինչպէս կ'ապացուցուի ներքին ու պատմական փաստերով, երբ վառահայր էր արդէն Մոսսուլի մօտ Մար-Մատթէի մենաստանին: Ս. տառիճաններն ընդունած պահուն՝ Յակոբ կոչուեցաւ, ու քիչ վերջը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Այդ Յակոբ անունակոչութիւնն է՝ որ հաւանորէն Գեննաղեան ցուցակին ու հայ ձեռագիրներուն մէջ պատճառ եղեր է շփոթելու Յակոբ Ափրաատը Յակ. Մծբնացւոյն հետ: Վերջինս՝ այն է՝ Մծբնացին վախճաններ է 338 թուականին, և անկէ տարիներ վերջն է (344ին), որ Յակ. Ափրաատ Սելեւկիոյ ու կոնստանդնուպոլսի եպիսկոպոսներուն կողմէ ուղղուի է իր Ժ. ճառը կամ շրջաբերական թուղթը առ բոլոր կղերը պատրիարքական թեմին: Բայց աստի՛ զիտեղի է որ, Ափրաատ բոլորովին անտեղեակ կ'երեւի քրիստոնեայ արեւմուտքին մէջ յուզուած կրօնական կամ եկեղեցական խնդիրներուն, Նիկիոյ ժողովին գումարուելուն, արիստեան ազանդին բուռն հակաձառութիւններուն, եւն, որոնք 325ին սկսեալ վերուվայր կ'ընէին ամբողջ քրիստոնէութիւնը, և ասոնց մասին ո՛ր է է աղօթ ակնարկ մ'անգամ չկայ բոլոր 23 ճառերուն մէջ, ինչ որ անփոփոխութիւն կ'ապացուցանէ՝ թէ այդ գրութեան հեղինակը Ս. Յակոբ Մծբնացին է, այլ Յակոբ Ափրաատ՝ Չգոն պարսիկը:

Ո՛ր է փաստ կամ ապացոյց մը չունինք, թէ արդեօք Ս. Եփրեմ ու Յակոբ Ափրաատ ճանչցէր են զիրար, ունեցէր են ո՛ր է առնչութիւն կամ թէ ազգուր են իրարմէ իրենց գրութեանց մէջ: Սակայն անտարակոյս է՝ թէ երկուքն գրութեանց մէջ ալ վարդապետական շատ մերձաւոր կէտեր կան, յատուկ՝ բնորոշ կարծիքներ, որ չեն գտնուիր ուրիշ Ս.

Հարց մօտ, որոնք հասարակաց աղբիւր մ'ենթադրել կու տան, որ է՝ ասորական եկեղեցւոյ հին աւանդութիւն մը: Ասոնց մէջ զլիսաւորներն են. ա. Մարգկային հոգիներուն վիճակը, երբ մահուամբ կ'անջատուին մարմիններէն. բ. Աստուածամօր կուսին աւանդակաւորութիւնը (յունարէն *αναπαρθισια*), և ասոր հետեւանքով Ա. Եփրեմ Յորրեան վարդապետութիւնը: Նկատմամբ առաջնոյն, Ափրաատ ու Ս. Եփրեմ կ'աւանդեն, թէ մարդուս հոգին՝ մարմնէն բաժնուելէն վերջը՝ ամենախորհոգեկան քննարկան մը մէջ կ'իյնայ, և առանձնական դատաստանին համեմատ՝ յատուկ կայեան մը կ'երթայ, ուր մեղաւորը՝ կը տանջուի իր խղճի խայթէն, ու արդար՝ կը հրճուի ու կը սպասէ յուսով յարութեան. մեղաւորին կայեանը՝ կը կոչուի օրեաւն ցաւոց, իսկ արդարինը՝ Ս. Եփրեմ կը կոչէ կայեանք սրտոց, իսկ մեր Շնորհալին՝ օրեաւնք արդարոց: Եւ միայն վերջին դատաստանին օրն է՝ որ կ'արթնան հոգիներն իրենց խոր թմրութենէն միանալու իրենց մաշկմաններուն հետ և ընդունելու իրենց յաւիտեական բաժինը: Ս. Յակոբ Ափրաատ յայտնապէս կ'ըսէ (ճառ 2, 14 Բ, 18). «Արդարեւ պիտի չընդունին իրենց վարձքը, և ո՛չ մեղաւորներն իրենց սոսկալի պատիժը, մինչեւ որ գայ Դատաւորը զատելու զանոնք իրարմէ, արդարեւ իր աջակողմը դասելով ու մեղաւորներն իր ձախակողմը» (Labourt. էջ 35): Ս. Եփրեմ ալ զրեթէ նոյն կարծիքը կը յայտնէ, իր ժամանակի ասորական կ'անդանի աւանդութեան հետեւելով, որ կ'ընդունի սակայն թէ արդարեւ իրենց օթեւանին մէջ ամէն երանական վայելք ունին և կը բարխօսեն նոյն իսկ առ Աստուած իրենց զիմող հոգիներուն համար: Իրեն մէկ հրաշալի աղօթքին մէջ՝ 141 տուններէ կազմուած, — որուն ներշնչման ու ազդեցութեան տակ է՝ որ մեր Շնորհալին յօրինել է իր «Հաւատով խոստովանիմ» գեղեցիկ

աղօթքը, — կը կարգանք հետեւեալ տողը, « Ի կայանս սրբոց հանգձ զիս սպասել և ակն ունել զալստեան քո », որուն հետեւողութեամբ է՝ որ Ծնորդալին ալ իր « Հաւատով խոստովանիմ » աղօթքին՝ « Լոյս ճշմարիտ Քրիստոս » բառերով սկսող տանը մէջ կ'ըսէ, « արժանաւորեալ . . . հանգչել յաւով բարեաց յօրեալսն սրբարոց՝ մինչեւ յօր մեծի զալստեան քո », որ ցոյց կու տայ թէ մեր Ծնորդալին ալ այս մասին տարածայն չէ Ս. Եփրեմի կարծիքէն:

Երկրորդ վարդապետական խնդիրն է, Ս. Կուսին անմեղանքականութիւնը՝ իր ընդարձակ առումով, որով Ս. Կոյսը ազատ կ'ըլլայ նոյն իսկ սկզբնական մեղքէն իր յղութեան մէջ: Այդ վարդապետութիւնը Անարատ Յղութեան Ս. Կուսին՝ ոչ մէկ Եկեղեցի՝ ոչ յոյն և ոչ լատին՝ ընդունած չէր տակաւին, և նոյն իսկ Միջին Դարու շրջանին ահագին հակաճառութիւններ կ'ըլլային անոր մասին՝ Թովմայական և Սկոտեան աստուածաբաններուն մէջ, երբ արդէն Գ. ու Գ. դարերէն սկսեալ՝ որոշ ու բացայայտ կերպով ընդունուած էր այդ վարդապետութիւնը ասորի Եկեղեցիէն, ինչպէս կը կարդանք Ափրատի ու Ս. Եփրեմի զրութեանց մէջ:

Ինչպէս ըսինք առաջ, իր հոգւոյն մէջ այնքան խորապէս քանդակուած էր վերջին դատաստանին ահաւոր պատկերը, որ զիշեր ու ցորեկ՝ ըլլայ անապատներուն խորը, ըլլայ քաղաքներուն մէջ զայն կը մտածէր, կ'ողբար՝ կ'արտասուէր համեմատելով իր թոյլ կեանքը մարտիրոսներուն ու խոստովանողներուն կրածներուն հետ, և յաճախ իր ճառերուն և յօդոցներուն մէջ կը ներկայացնէր զայն այնպիսի կենդանի գոյներով՝ որ սարսուռ կ'ազդէին ունկնդիրներուն վրայ: Կը պատկերացնէր անոնց դժուրը ու անոր սոսկալի տանջանքները, — այն այրիչ՝ կ'ըզէր՝ ժանտահոտ տիղմը՝ ուր կ'ընկղմին կը թաւալին լկտի հեշտախտաւորները, այն

անշէջ հուրը՝ որով կը տանջուին չարագործները, այն անյագելի պատուէն ու քաղցը՝ որով կը լկտին որկրամոլները, այն թանձր ու շօշափելի խաւարը՝ ուր կը տառապին աստուածային լոյսը ատեցող հոգիները: Անմիջապէս արեւայութեան հոգւոյն կը զնէ անսահման ցանկապատ մը կամ պատասպարան մը՝ իրը՝ Բաւարանը, ուր կ'երթան սրբուելու իրենց մեղքերէն, որոնք մեղանշիր են ազիտութեամբ կամ անզիտակից չարութեամբ: Անկէ վերջը կը սկսի բուն Արեւայութիւնը կամ երկնաւոր Դրախտը, զոր երեք գօտիներու կը բաժնէ, Ստորին, Միջին ու Վերին կամ Բարձրագոյն: Ստորինին մէջ կ'երթան նորադարձները կամ ապաշխարողները, — Միջինին մէջ՝ անմեղները կամ արդարները, — Բարձրագոյնին մէջ՝ յաղթողները կամ յաղթանակողները: Սոյն գօտիներէն իւրաքանչիւրը՝ տասն աստիճաններ ունին, մին՝ տարբեր միւսէն, ուր կ'երթան սուրբերը ըստ իրենց արդիւնքներուն: Ամենէն վերին աստիճանն է՝ Երեւոյնը, Քրիստոսի Առաքեալներուն ու աշակերտներուն յատկացուած, ուսկից վեր կայ Աստուծոյ աթոռը, համակ լոյս, հուր, բոց, իմաստութիւն, զօրութիւն, անսահման երանութիւն, սերտեանք ու քերթներէ շրջապատուած . . . կատարեալ Տանթեական գաղափարներ:

Ս. Եփրեմ կը պատմէ ինքնիր մասին:

Օր մը՝ երբ քաղաքի մը մէջ (Կեսարիան է այս) կը գտնուէի, Աստուած ողորմեցաւ ինձի, որուն ձայնը լսեցի, որ կ'ըսէր. « Ե՛ւ, Եփրեմ, ու ճաշակէ խորհուրդները »: Այլալիւժ՝ հարցուցի, թէ ո՞ր պիտի ճաշակեմ զանոնք: Պատասխանեց. « Ա՛հա՛ տանս մէջ կայ ոսկեղէն ծանօթ մը՝ որ պիտի տայ քեզի այդ կերակուրը »: Չարհուրած՝ ոտքի ելայ ու գացի Բարձրելոյն տաճարը. երբ գաւթը մտայ, տեսայ զանէն սրբարանին մէջ այդ անօթը ընտրութեան, որուն վրայ հիացած սքանչացած էր բոլոր ժողովուրդը, որոնք

աչքերնին յառած կը դիտէին զինքը զմայլումով: Տեսայ տաճարը այդ աստուածային հոգւով ոգեւորուած: Տեսայ այն գողար ու սրտայուզիկ սէրն ու գորովը՝ զոր ունէր ան այրիներուն ու որբերուն հանդէպ: Տեսայ հոն գետեր ու հեղեղներ արցունքի, զոր կը հոսեցնէր այն սուրբ հովիւը՝ երբ իր աղօթքները կը բարձրացնէր զէպի երկինք: Տեսայ անոր բերնին մէջ հրեղէն լեզու մը՝ որ հեղեղօրէն կը հոսէր Ս. Պողոսի վարդապետութիւնը, Աւետարանին օրէնքները ու մեր խորհուրդներուն կրօնական երկիւղը: Տեսայ վերջապէս այն սուրբ բազմութիւնը հաւատացեալներուն՝ աստուածային շնորհաց փայլով շողջողուն »:

Կը շարունակէ Ս. Եփրեմ՝ թէ « Երբ յափշտակուած հոգւով տաճարը մտայ, Ս. Բարսեղ հայրապետը՝ հանգիսէն վերջը՝ աւանդատուն կանչեց զիս ու թարգմանի մը ձեռքով հարցուց. « Դ՞ու ես այն Եփրեմը՝ որ այնքան զարմանալի կերպով փրկեմ »: — « Ա՛յո, ես եմ, ըսի, այն ծին տակ »: — « Ա՛յո, ես եմ, ըսի, այն ծին տակ »: — « Այո խօսքերուս վրայ մօտեցաւ ինձի այն աստուածային այլը ու համբուրեցանք միասին, տալով ինձի իր սուրբ հոգւոյն սնունդը, ոչ թանձր ու անմահ և ապականացու սնունդ մը, այլ անմահ և յաւերժական սնունդ մը ճշմարտութեանց յաւերժական սնունդ մը ճշմարտութեանց զեղունաց խօսքերէն յուզուած, արտասուած զին գոչեցի. « Հայր, ազատէ՛ զիս ծուրթէն ու տկարութենէս, առաջնորդէ՛ ինձի ուղիղ ճամբուն մէջ. արդարութեան ու ճշմարտութեան Աստուածը բերաւ զիս ու ճշմարտութեան թիւշկն ըլլաւ քեզի մօտ, որ հոգւոյս բժիշկն ըլլաս կ'աղաչեմ, խարսխէ՛ հոգւոյս նաւը անշուրթութեան ալիքներուն մէջ »:

Ս. Եփրեմի մէջ տիրապետող ոգին էր՝ սրտերը յուզել, արտասուելի պարզեւր տալ ու մեղքերով վարակուած ոգիները զարթեցնել: Իր ճառերը, աղօթքներով կարա-

տուած, տեսակ, մը տրամախօսութիւններ են Աստուծոյ և հոգիներուն մէջ: Յաճախ՝ այլաբանական տեսիլներու պատմութեամբ կը խառնէ անոնց մէջ, որոնք կը թուին իրապէս ներկայանալ անոր աչքերուն, երբ ջերմ հաւատքին ու վառութեան երեւակայութեան թեւերով կը յափշտակուի: Անոր ամենէն արժանաւոր ներբողն է՝ այն հոյակապ շարականը, զոր ընծայեք է իրեն մեր սուրբ վարդապետներէն մին, որ կը նմանցնէ զինքը Եղիայի և Յովհաննու Մկրտչի՝ իր զարմանալի ճգնութեանց համար. կը կոչէ զինքը անուշահոտ վարդ՝ իր առաքինութեանց համար՝ փշարել ոստերէ ծաղկած, այն է՝ հեթանոս ծնողքէ ծնած, որ Հոգւոյն Սրբոյ շնորհքներուն և իմաստութեան հոսանքը ընդունած, առաքեալներուն նման, ծաւալեց զանոնք ու արբոյց ծարաւի հոգիներուն:

Ան՝ իր սրբութեամբ ու զիտութեամբ՝ այնքան բարձր ու գերազանց՝ արժանի ոչ միայն քահանայական կարգին՝ այլ նաեւ եպիսկոպոսութեան աստիճանին, հազիւ իր հասունացած տարիքին ու յետ երկար տարիներ քարայրներն ու փապարները թնդացնելու իր ողբերով ու կոծերով, հազիւ, կ'ըսեմ, զիջաւ սարկաւագ ձեռնադրուելու իր հոգեւոր հօրմէն՝ Ս. Յակոբ Մծբնացիէն, — պարզապէս եկեղեցական կարգ մ'ունենալու և իր առաքելական հոգեւոր պաշտօնը կատարելու համար: — Մինչ, ըստ այլոց, Ս. Բարսեղ հայրապետին կ'ընծայուի զինքը սարկաւագ ձեռնադրելու, այն առթիւ՝ երբ իրեն այցելութեան գնաց Ս. Եփրեմ: Սակայն արդի ասորագէտ հեղինակները իրենց զանազան լուրջ պատճառներով, չեն ընդունիր այդ կարծիքը: Նոյն իսկ՝ խոյս տալու համար եպիսկոպոսական աստիճանէն ու պատուէն, որ իրեն շատ անգամներ առաջարկուեցաւ, յիմար կեղծեց ինքզինքը ու ազատեցաւ, որ և է պատիւ կամ աստիճան իրեն տանջանք մը կամ պատիժ մը նկատելով:

Վերջ

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ